Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի բազմահազարանոց հավաքածոյի բաղկացուցիչ մասերից է նաև հայագետ Գրիգոր Խալաթյանցի (1858—1912) հայերեն ձեռագրերի հավաքածոն, որն իր ներկա վիճակում ամփոփում է ԺԴ—ԺԹ դարերում ընդօրինակված հինգ տասնյակից ավելի գրչագիր մատյաններ:

Երբ 1903 թվականին Մեսրոպ Տեր-Մովսիսյանը կազմում էր հավաքածոյի ձեռագրերի համառոտ ցանկը[1], այն արդեն բովանդակում էր 48 ձեռագիր (№№ 1—48): Հետագա տարիներին (1904—1912) ավելանում են 10 նոր ձեռագրեր, որոնցից 7-ը Խալաթյանցը արձանագրել է նույն ցուցակի իր կրկնօրինակում (№№ 49—55)[2], իսկ մնացած 3-ը՝ ոչ: Չարձանագրված այդ 3 ձեռագրերը պայմանականորեն նշանակում ենք [56], [57], [58] թվահամարներով:

Ձեռագրերը մինչև Մ. Տեր-Մովսիսյանի կողմից ցուցակագրվելը Խալաթյանցի գրադարանում պահվել են տպագիր գրքերի հետ միասին՝ մեկ ընդհանուր համարակալման տակ: Առկա ձեռագրերից 35-ի վրա պահպանվել են այդ հին թվահամարները՝ 202, 245—269, 271—275, 277, 278, 282:

Հավաքածոյի 58 ձեռագրերից այսօր Մաշտոցի անվան Մատենադարանում են գտնվում միայն 54-ը (№№ 1—8, 10—47, 49—53, [56—58]), որոնք բոլորն էլ ունեն «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՑ. БИБЛИОТЕКА Г. А. ХАЛАТЯНЦА» մակագրությամբ ձվաձև կնքադրոշմ: Բացակայում են հետևյալ 4 ձեռագրերը, որոնց ուր գտնվելը մեզ հայտնի չէ.

№ 9. «Շարական, ԺԶ դար (կրկնագիր, նախկին բնագիրը հունարեն է)»:

№ 48. «Գրիգոր Մագիստրոսի Թուղթ, Մ. Էմինի ձեռքով մաքուր արտագրված հին գրչագրից...»:

№ 54. «Биография знаменитых людей Кавказа».

№ 55. «34 թերթ հին ավետարանից, մագաղաթյա գրչագիր»:

Առկա 54 ձեռագրերը Մատենադարան են մուտք գործել տարբեր ժամանակներում և տարբեր ուղիներով:

Ձեռագրերից 1-ը (№ [57]) Մատենադարանը ստացել է 1925 թվականին Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի միջոցով, 3-ը (№№ 6, 29, 34)՝ 1938 թվականին Երևանի գրական թանգարանի հավաքածոյի կազմում, իսկ 38-ը (№№ 2, 3, 5, 7, 10—17, 19, 20, 22, 25, 28, 30—33, 35—37, 39—47, 50—53, [56])՝ 1925 թվականին Լազարյան ճեմարանի հավաքածոյի հետ միասին[3]: Ինչ վերաբերում է մնացած 12 ձեռագրերին (№№ 1, 4, 8, 18, 21, 23, 24, 26, 27, 38, 49, [58]), որոնք, ի միջի այլոց, հավաքածոյի

---

[1] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների հավաքածո, գործ Մ. Մագիստրոսի, № 29:

[2] Անդ, №№ 98ա, 98բ:

[3] «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հատոր Ա, Երևան, 1965, էջ 132—133:

ամենաարժեքավոր մասն են կազմում, Մատենադարանը ձեռք է բերել 1963 թվականին Մոսկվայում, Գրիգոր Խալաթյանցի ազգականուհի Մարիա Իվանովնա Պաստուխովայից:

Ստորև տալիս ենք Գրիգոր Խալաթյանցի ձեռագրերի հին ու նոր թվահամարների համեմատական տախտակը:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆՑԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

Գ. Խալաթյանց		Մատենադարան	Գ. Խալաթյանց		Մատենադարան	Գ. Խալաթյանց		Մատենադարան
Մատենադարան	Հին դիր		Մատենադարան	Հին դիր		Մատենադարան	Հին դիր	
1	—	10211	21	—	10201	41	277	6726
2	269	6379	22	260	7040	42	261	7078
3	278	6732	23	—	10210	43	259	7061
4	—	10204	24	—	10206	44	262	7076
5	267	7200	25	202	6724	45	247	6533
6	—	8558	26	—	10208	46	282	6331
7	266	7147	27	—	10202	47	250	6602
8	—	10207	28	257	6882	48	—	—
9	—	—	29	—	7677	49	—	10205
10	263	7086	30	245	6520	50	251բ	6566
11	—	6434	31	248	6600	51	251ա	6565
12	254	6877	32	249	6605	52	255	6998
13	253	6727	33	246	6550	53	252	6625
14	272	6609	34	—	8563	54	—	—
15	—	6266	35	268	7190	55	—	—
16	265	7118	36	264	7100	[56]	—	6588
17	256	7001	37	275	6635	[57]	—	6731
18	—	10209	38	—	10203	[58]	—	10200
19	258	6979	39	271	6479			
20	263	6579	40	274	6676			

Թե ո՞ւմ են պատկանել նշված ձեռագրերը նախքան Խալաթյանցի հավաքածոյի մեջ մտնելը, քիչ բան է հայտնի: Ստորև տալիս ենք պահպանված անունների ցանկը:

Էմին Մկրտիչ, Մոսկվա—6 (№№ 6520, 6533, 6550, 6600, 8563): Մ. Էմինի ձեռագրերի մասին տե՛ս «Արձագանք», 1892, № 125:

Էնֆիաճյան Ավետիք և Համբարձում գրավաճառ եղբայրներ, Թիֆլիս—2 (№№ 6266, 8563): Տե՛ս «Էջմիածին», 1968, № 7, էջ 54, 55:

Խալաթյան Աբրահամ, Ալեքսանդրապոլ, 1862 թ.—1 (№ 6602):

Խալաթյանց Հովհաննես Գրիգորի, Ալեքսանդրապոլ, 1865 թ.—2 (№№ 7200, 10209):

Խաչկյան տեր Հովհաննես, Կալկաթա, 1867 թ.—1 (№ 7040): Նվիրել է տեր Հովսեփ Գ. Հ. Էթեապյանին:

Կոխչյան հայր Արտեմ—1 (№ 10202):

Միսաքյանց ընտանիք—1 (№ 10200):

Շերմազանյանց Գալուստ, Թիֆլիս, 1851 թ.—1 (№ 6588):

Պատկանյան Գաբրիել, Պետերբուրգ, 1875 թ.—3 (№№ 6565, 6566, 6625):

Պողոսով Սարգիս, Պետերբուրգ, 1839 թ.—1 (№ 6998):

Սարգսյան Լուտովիկ, ուսուցիչ—1 (№ 10206):

Սողոմոն Միրզա, Ռուսական կայսրության առաջին թարգման—1 (№ 6882):

Տեր-Մատթեոսյան Սենեքերիմ—5 (№№ 6732, 6877, 7118, 8558, 10204):

Օհանյան Հասրաթյանց Գրիգոր, Հին Նախիջևանի Քուլթափա գյուղ, 1910 թ.—1 (№ 10205):